ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
պատմական գիտ. դոկտոր

ՀԱՅՈՑ ՍՄԲԱՏ Ա. ԹԱԳԱՎՈՐԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց Սմբատ Ա. թագավորի գահակալության շրջանը հայ պատմագիտության մեջ ավանդաբար թվագրվել է 890-914 թթ.[1]: Նրա գահակալության օրոք տեղի ունեցած բազմաթիվ իրադարձություններ հաճախ ներկայացվել են հենց վերոհիշյալ ժամանակահատվածի շրջանակում: 890-914 թթ. միջակայքը կազմում է 24/25 տարի, որը հակասում է Սմբատ Ա.-ի գահակալության տարիների վերաբերյալ ժամանակակից Կաթողիկոս եւ պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկությանը: Բացի այդ, երբեմն կասկածի տակ են առնվել ինչպես Սմբատի՝ 890 թ. գահ բարձրանալու, այնպես եւ՝ 914 թ. վախճանվելու տեսակետները: Այսպիսով, կարեւոր են Սմբատ Ա.-ի գահ բարձրանալու եւ մահվան թվականների ճշգրտումն ու նրա օրոք տեղի ունեցած իրադարձությունների ժամանակագրության հստակեցումը:

Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկության համաձայն՝ Սմբատ Ա. թագավորել է 22 տարի՝ կյանքի վերջին շուրջ մեկ տարին անցկացնելով գերության մեջ[2]: Պատմիչը, ցավոք, Սմբատի գահ բարձրանալու եւ թագավորության շրջանի վերաբերյալ որեւէ ժամանակագրական տեղեկություն չի հաղորդում: Միակ բացառությունը հայոց 358 թ. (909/910) Ատրպատականի ամիրա Յուսուֆի արշավանքի վերաբերյալ տեղեկությունն է, որին եւ պատմիչի նկարագրած հետագա իրադարձությունների ժամանակագրությանը կանդրադառնանք ստորեւ:

Պատմիչներից շատերը բավարարվում են միայն Աշոտ Ա. թագավորի վախճանվելուց հետո Սմբատի գահ բարձրանալը հիշատակելով, ինչպես նաեւ նրա մահվան թվականի մասին տեղեկություններ հաղորդելով:

Թովմա Արծրունին տեղեկացնում է, որ Աշոտ Ա.-ն վախճանվել է «ՅԼԹ. թուականութեան Հայոց (իմա՛ 339 թ.՝ 890 թ. ապրիլ - 891 թ. ապրիլ - Ա. Ե.) եւ ի ԺԵ. (15) ամի հայրապետութեանն Գէորգեայ Հայոց Կաթողիկոսի»[3]: Ըստ որում՝ Դվինի երկրաշարժը տեղի է ունեցել Սմբատ Ա.-ի թագավորության եր-

1 Տե՛ս **Միքայէլ Չամչեանց**, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամ 1784, հ. Բ., Վենետիկ, 1785, էջ 707-708, 756-757:

2 Տե՛ս «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 505-506:

3 **Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, Երեւան, 1985, էջ 356:

որդ տարում[4]: 876 թ. Կաթողիկոս դարձած[5] Գեւորգ Գառնեցու հայրապետության 15-րդ տարին 891 թվականն է, որը համապատասխանում է Աշոտի մահվան թվականի հետ կապված հիշատակությանը: Ըստ Թովմա Արծրունու՝ Գեւորգ Գառնեցին վախճանվել է հայոց 347 թ. (898/899), իսկ նրան փոխարինած Մաշտոց Կաթողիկոսն աթոռակալել է 8 կամ 9 ամիս[6]: Պատմիչի մյուս ժամանակագրական տեղեկությունը վերաբերում է Մանազկերտում հաստատված արաբ կայսիկների ապստամբությանը, որը ճնշվել է հայոց 351 թ. (902/903)[7]: Հաջորդ տարի, թերեւս 903 թ. Սմբատ Ա.-ի դեմ ելույթ ունեցավ Սյունյաց Սմբատ իշխանը, որն ամրացավ Վայոց ձորի ամրոցներում, սակայն Վասպուրականի Աշոտ իշխանի միջնորդությամբ դարձյալ հնազանդվեց Հայոց թագավորին[8]:

Ըստ Ասողիկի՝ Սմբատը թագավոր է դարձել հայոց ՅԽ. թվականին (340 թ.՝ 891 թ. ապրիլ - 892 թ. ապրիլ) եւ թագավորել 24 տարի: Գեւորգ Կաթողիկոսը վախճանվել է հայոց 346 թ. (897 թ. ապրիլ - 898 թ. ապրիլ): Հովհաննես Դրասխանակերտցին Կաթողիկոս է դարձել նույն՝ հայոց 346 թ. կամ 897/898 թ.[9]: Վերջապես, ըստ Ասողիկի՝ Սմբատ Ա.-ն սպանվել է հայոց 364 թ., այսինքն՝ 915/916 թ.[10]:

Մովսես Դասխուրանցին Սմբատ Ա.-ի մահը թվագրում է հայոց 363 թ. (914/915), իսկ Գեւորգ Գառնեցու մահը՝ հայոց 346 թ. (897/898)[11]:

Ստեփաննոս Օրբելյանն Ատրպատականի Յուսուֆ ամիրայի արշավանքի սկիզբը դնում է հայոց 358 թ., այսինքն՝ 909/910 թ., իսկ Սմբատի մահը՝ հայոց 362 թ., այսինքն՝ 913/914 թ.[12]:

Ըստ Սամվել Անեցու՝ Աշոտ Ա.-ի մահը վրա է հասել նրա իշխանության 36-րդ տարում եւ թվագրված է փրկչական ՊՂԱ. (891) եւ հայոց ՅԼԸ. (338 թ.՝ 889/890) թվականով, Բյուզանդիայի Լեւոն Զ. կայսեր (886-912) իշխանության չորրորդ ու Գեւորգ Բ. Գառնեցի Կաթողիկոսի գահակալության 15-րդ տարով: Ըստ Սամվել Անեցու՝ Գեւորգ Բ. Գառնեցի Կաթողիկոսի գահակալության առաջին տարին հայոց 324 թվականն էր, այսինքն՝ 875/876 թ.: Աշոտի մահը տեղի է ունեցել Բյուզանդիայի Լեւոն Զ. կայսեր գահակալության 4-րդ տարում (890/891): Նույն թվականին գահ բարձրացած Սմբատի թագավորության

4 Տե՛ս անդ:

5 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Ա., Վենետիկ, 1869, էջ 475:

6 Տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 376:

7 Տե՛ս անդ, էջ 380-382:

8 Տե՛ս անդ, էջ 382-384:

9 Տե՛ս **Ստեփաննոս Տարաւնեցի Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ., Երեւան, 2011, էջ 741:

10 Տե՛ս անդ, էջ 745:

11 Տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը եւ ներածությունը Վ. Առաքելյանի, Երեւան, 1983, էջ 337:

12 Տե՛ս «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, գլ. 38:

առաջին տարին, սակայն, համապատասխանում է Կաթողիկոսի գահակալության 16-րդ տարուն, այսինքն՝ 892 թ.[13]:

Վարդան վարդապետը տեղեկացնում է, թե Սմբատը գահ է բարձրացել 344 թ. (895/896) եւ իշխել 24 տարի[14]: Թվականը սխալ է, որ, թերեւս, պետք է սրբագրել եւ դարձնել 340 թ. (891/892):

Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Սմբատ Ա.-ն թագավորել է 24 տարի[15]:

Սմբատին թագավորության 24 տարի է վերագրում նաեւ Մխիթար Այրիվանեցին[16]՝ նրա մահը թվագրելով 913 թ.[17]:

Սանահինի վանքի հիշատակարանում նշված է, որ «զկնի Աշոտոյ (իմա՛ Աշոտ Ա. - Ա. Ե.) ՅԽ. (340 թ.՝ 891/892 - Ա. Ե.) թուականին թագաւորէ Սմպատ որդին նորա, տիրելով բոլոր հայրենեաց իւրոց Հայոց եւ Վրաց եւ ժառանգելով զքաղաքս հակառակորդաց»[18]:

Դավիթ Բաղիշեցու ժամանակագրության մեջ Սմբատ Ա.-ի թագադրության թվական է համարվում 891 թ., իսկ թագավորության տարիների քանակը նշված է 24[19]:

Ջվանշերը տեղեկացնում է, որ Սմբատը Յուսուֆի կողմից գերվելուց հետո կտտանքների է ենթարկվել մեկ ամբողջ տարի[20]:

Աշոտ Ա.-ի եւ Սմբատ Ա.-ի վերաբերյալ տեղեկություններ են պահպանվել նաեւ Միքայել Ասորու երկում: Նա հաղորդում է, որ Աշոտն իշխել է 40 տարի, իսկ Սմբատ Ա.-ն թագավորել է հայոց 339 թվականից (890 թ. ապրիլ - 891 թ. ապրիլ) սկսած՝ 22 տարի: Ժամանակագիրը տեղեկացնում է նաեւ, որ Սմբատի թագավորության 22-րդ տարում, որը հայոց 360 (911/912) թվականն էր, Ատրպատականի ամիրա Յուսուֆը ներխուժեց Հայաստան: Նույն թվականին Միքայել Ասորին դնում է Սմբատ Ա.-ի մահը[21]:

Սմբատ Ա.-ի՝ 24 տարի իշխելու վերաբերյալ հիշատակում են նաեւ հայկական հիշատակարանները[22]:

---

13 Տե՛ս **Սամուէլ Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, բնագիրը կազմեց Ա. Հայրապետեանը, Երեւան, 2011, էջ 115:

14 Տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 86:

15 Տե՛ս «Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ համառօտ պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ ցաւուրս իւր լուսաբանեալ», Վենետիկ, 1865, էջ 45:

16 Տե՛ս «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական», ի լոյս ընծայեաց Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1867, էջ 19:

17 Տե՛ս անդ, էջ 71:

18 «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի քէօթուկը)», աշխատ.՝ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 50:

19 Տե՛ս «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.)», հ. II, կազմեց Վ. Հակոբյան, Երեւան, 1956, էջ 336:

20 Տե՛ս «Համառօտ պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշէրի պատմչի», Վենետիկ, 1884, էջ 107:

21 Տե՛ս "Chronique de Michel le Syrien patriarche Jacobite D'Antioche (1166-1199)", Éditée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, t. III, Paris, 1905, էջ 514-516:

22 Տե՛ս **Գարեգին Ա. Կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250 թ.), 48 նմանահանութիւններով, Անթիլիաս, 1951, էջ 87:

Հ. Մանանդյանը եւ Ռ. Մաթեւոսյանը Սմբատ Ա.-ի թագավորության տարիների հարցում հենվում են ավանդական՝ 890-914 թթ. թվագրման վրա[23]: Հ. Թոփչյանի տեսակետի համաձայն՝ Սմբատ Ա.-ի թագավորությունը սկիզբ է առել 891 թ.[24]: Ն. Ադոնցը կարծում է, որ Սմբատը գահ է բարձրացել 890 թ. եւ իշխել մինչեւ 913 թ.: Իսկ 891 թ. նրա թագավորության առաջին տարին էր[25]: Հ. Հարությունյանը կարծում է, որ Աշոտ Ա.-ն մահացել է 890 թ., իսկ Սմբատը հայոց թագավոր է օծվել 891 թ.[26]: Ի վերջո, սակայն, նա Սմբատ Ա.-ի թագավորությունը թվագրում է 890-914 թթ.[27]: Ա. Տեր-Ղեւոնդյանը թեեւ նշում է, որ Սմբատ Ա.-ն թագավորել է 890-913թթ., սակայն հավելում է, որ Ափշինը նրան թագ է բերել 892 թ.[28]:

Փաստորեն, կարող ենք նշել, որ Սմբատ Ա.-ի գահակալության սկիզբը 890 թ. համարող հեղինակների մեկնակետն այն է եղել, որ նա գահ է բարձրացել հայոց 339 թ.՝ Աշոտ Ա.-ի մահից հետո: Հայոց 339 թ. սկսվել է 890 թ. ապրիլին եւ ավարտվել 891 թ. ապրիլին: Թվում է, թե մյուս պատմիչների կողմից Սմբատ Ա.-ին 24 տարվա թագավորություն վերագրելը բխում է այն իրողությունից, որ հայոց 339 թ. նրանք միանշանակորեն նույնացրել են 890 թվականի հետ: Իսկ քանի որ Սմբատ Ա.-ն սպանվել է 913 թ., ապա 890-913 թթ. միջակայքը հաշվարկվում է 23-24 տարի: Որոշ հեղինակներ էլ, Սմբատ Ա.-ի թագավորության 24 տարիները գումարելով 890-ին, ստացել են 914 թ.:

Արդ, սկզբում փորձենք ճշտել Սմբատ Ա.-ի գահ բարձրանալու թվականը: Դատելով Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկություններից՝ Սմբատը ներկա չի եղել Աշոտ Ա. թագավորի թաղմանը, քանի որ գտնվում էր Գուգարքում[29]: Հոր մահվան լուրը ստանալով՝ նա վերադառնում է, սակայն գժտվում հորեղբոր՝ Աբասի հետ: Աբասը ձերբակալել էր Կղարջքի Ատրներսեհ կուրապաղատին: Կաթողիկոսի միջնորդությունը զուր է անցնում, որի հետեւանքով Սմբատը հեծելազորով գրոհում է Աբասի տիրույթների վրա: Աբասն Ատրներսեհին ստիպված ազատ է արձակում, որը մեկնում է իր տիրույթները: Այնուհետեւ, Ատրպատականի Ափշին ամիրան խալիֆայի հրամանով թագավորական թագ է բերում Սմբատին, եւ նա օծվում է Հայոց թագավոր: Հովհաննես

23 Տե՛ս **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ., Բ. մասի նյութեր, Երեւան, 1960, էջ 40-43: Հ. Մանանդյանը Սմբատ Ա.-ի թագավորության տարիների թվագրման հարցում տարբեր կարծիքներ է ներկայացրել: Մեկ այլ տեղում Սմբատ Ա.-ի թագավորությունը նա թվագրել է 891-914 թթ. (անդ, էջ 64). **Ռ. Մաթեւոսյան**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երեւան, 1990, էջ 100:

24 Տե՛ս **H. Thopdschian**, Politische und Kirchengeschichte Armeniens unter Asot I und Smbat I. "Mitteilungen des Seminars fur Orientalische Sprachen", Westasiatische Abt. 8, 1905, էջ 166:

25 Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ե., Երեւան, 2012, էջ 190-191:

26 Տե՛ս **Հ. Հարությունյան**, Հայաստանը IX-XI դարերում, Երեւան, 1959, էջ 38:

27 Տե՛ս անդ, էջ 146:

28 Տե՛ս **А. Тер-Гевондян**, Армения и Арабский халифат, Е., 1977, էջ 240. նաեւ՝ «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., հ III, Երեւան, 1976, էջ 27:

29 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 446:

Դրասխանակերտցին այս իրադարձությունները նկարագրում է համառոտ, մեկ շնչով, միայն հավելելով, որ Սմբատի եւ Աբասի հակամարտությունը տեւել է «բազում աւուրս»[30]: Բացի այդ, ակնհայտ է, որ Սմբատը սկզբում խալիֆայից թագ է ստացել, իսկ այնուհետեւ՝ անմիջապես կազմակերպել թագադրության հանդեսը:

Փաստորեն, անհրաժեշտություն է առաջանում ճշգրտելու Աշոտ Ա.-ի մահվան թվականը, որը հնարավորություն կտա հստակեցնելու Սմբատի գահ բարձրանալու տարին, քանի որ այդ երկու իրադարձության միջեւ երկար ժամանակ չէր անցել: Հարկ է նախապես նշել, որ այն հիմնականում տեղադրվում է 890 թ.[31]: Սակայն «Յայսմաւուրք»-ի համաձայն՝ Աշոտ Ա.-ի հիշատակի (վախճանի) օրը նշվել է մարերի ամսի 21-ին[32]: Դրա հիման վրա Ղ. Ալիշանն Աշոտ Ա. թագավորի մահը թվագրում է 891 թ. փետրվարի 1-ով[33]: Խնդիրն այն է, որ աղբյուրների մի զգալի մասն Աշոտ Ա.-ի մահը թվագրում է հայոց 339 թ., իսկ այդ թվականի մարերի 20-ը համապատասխանում է 891 թ. փետրվարի 1-ին[34]: Մ. Օրմանյանը ճշտում է մտցնում Ղ. Ալիշանի տեսակետի մեջ՝ նշելով, որ ըստ «Յայսմաւուրք»-ի՝ Աշոտ Ա.-ի մահվան օրը հայոց 339 թ. մարերի 21-ն էր, այսինքն՝ 891 թ. փետրվարի 2-ը[35]:

Աշոտ Ա.-ի մահվան եւ Սմբատի թագադրության թվականը հստակեցնելուն կարող է նպաստել նաեւ Դվինի երկրաշարժի ժամանակի ճշտումը, քանի որ հայտնի է, որ այն տեղի է ունեցել Սմբատ Ա.-ի գահակալման երրորդ տարում[36]: Պատմագիտության մեջ երբեմն արտահայտվել է այն տեսակետը, թե Դվինի երկրաշարժը տեղի է ունեցել 893 թվականին[37]: Դեպքերի ժամանակակից Մաշտոց Եղիվարդեցու վարքում հստակեցվում է երկրաշարժի ժամանակը՝ հայոց ՅԽԲ. թվականի հրոտից ամսվա ԺԶ. (16), հինգշաբթի[38]: Հայոց ՅԽԲ. թվականի (342 թ.՝ 893 թ. ապրիլ - 894 թ. ապրիլ) հրոտից ամսվա 16-ը համապատասխանում է 894 թ. մարտի 28-ին, որն իրոք հինգշաբթի էր[39]: Մի

30 Անդ, էջ 446-448:

31 Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա., Երեւան, 2006, էջ 447. **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ., Բ. մասի նյութեր, էջ 39-40, 63-64. **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 2, Երեւան, 1967, էջ 504-510. **А. Тер-Гевондян**, նշվ. աշխ., էջ 240 եւ այլն:

32 Տե՛ս «Յայսմաւուրք», ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաւուրաց Տէր Իսրայէլի, ի Կոստանդնուպոլիս, 1834, էջ 234:

33 Տե՛ս **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 500:

34 Տե՛ս անդ, էջ 510:

35 Տե՛ս **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա., Կոստանդնուպոլիս, 1913, էջ 993-994:

36 Տե՛ս **Թումա Արծրունի եւ Անանուն**, էջ 354-360:

37 Տե՛ս **Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 463. **Հ. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 156. «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 30 եւ այլն:

38 Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (Ե.-ԺԲ. դարեր)», աշխատ.՝ Ա. Մաթեւոսյանի, Երեւան, 1988, էջ 41. «Էջմիածին» ամսագիր, 2011, Բ., էջ 68:

39 Ճշգրտումը կատարված է ըստ Բ. Թումանյանի տոմարական հաշվումների. տե՛ս **Բ. Թումանյան**, Տոմարական հաշվումներ. «Տեղեկագիր (հաս. գիտ.)», 1964, թ. 5, էջ 55-60:

Ավետարանում Դվինի երկրաշարժը թվագրված է հայոց 342 թ. (893/894)[40]: Իբն ալ-Ասիրը հաղորդում է, որ Դվինի երկրաշարժը տեղի է ունեցել հիջրայի 280 թ. (23 մարտ, 893 թ. - 12 մարտ, 894 թ.) շավալ ամսին (14 դեկտեմբեր, 893 թ. - 11 հուվար, 894 թ.)[41]: Անկախ ամսաթվից, խիստ հավանական է, որ երկրաշարժը տեղի է ունեցել 894 թ.: Այդ դեպքում Սմբատ Ա.-ի թագավորության առաջին տարին ստացվում է 891/892 թ.: Ավարտվում էր հայոց ՅԽԲ. (342) թվականը, որը, եթե Սմբատ Ա.-ի երրորդ տարին է, ապա երկրորդը՝ ՅԽԱ.-ն (341) է, իսկ առաջինը՝ ՅԽ. (340): Վերջինս սկսվել է 891 թ. ապրիլին եւ ավարտվել 892 թ. ապրիլին: Ի դեպ, չենք կարող համաձայնել Ա. Տեր-Ղեւոնդյանի այն կարծիքին, որ Սմբատ Ա.-ն խալիֆայից թագ է ստացել գահ բարձրանալուց 2 տարի անց, քանի որ դա հակասում է Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկություններին: Աղբյուրներում, ամենայն հավանականությամբ, արձանագրվել է Սմբատի գահ բարձրանալը եւ ոչ թե խալիֆայից թագ ստանալը, թեեւ, դատելով Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկություններից, դրանք տեղի են ունեցել միաժամանակ: Մյուս կողմից՝ Սմբատը գահ է բարձրացել հոր մահից ոչ երկար ժամանակ անց, անկասկած, նույն թվականին:

Աշոտ Ա.-ի՝ 891 թ. վախճանվելու եւ Սմբատ Ա.-ի՝ նույն թվականին գահ բարձրանալու փաստն են ապացուցում նաեւ այլ իրողություններ: Հովհաննես Դրասխանակերտցին մի ուշագրավ վկայություն ունի այն մասին, որ Աբաս սպարապետն Աշոտ Ա.-ի մահից հետո Գուգարքից վերադարձած Սմբատից պահանջել է, որպեսզի Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհն իրեն հանձնի իր քրոջ ամուսին Գուրգենի ձեռքից խլված երկու ամրոց[42]: Ատրներսեհն ամրոցներ խլել կարող էր միայն Գուգարքում, իսկ Գուրգենը, անկասկած, Կղարջքի Բագրատունիների ներկայացուցիչն էր: Հայտնի է, որ Կղարջքի Աշոտ կուրապաղատի որդի Ատրներսեհի որդի Գուրգենը 881 թ. մարտնչում էր Կղարջքի Ատրներսեհ կուրապաղատի եւ նրա հովանավոր իշխանաց իշխան Աշոտի դեմ՝ միանալով Գվարամ ու Նասր Բագրատունիների եւ Աբխազաց թագավորի դաշինքին[43]: Նման երկրորդ հակամարտության ժամանակ, որը տեղի ունեցավ 888 թ.՝ արդեն Աշոտ Ա.-ի գահակալության շրջանում, Գուրգենը միացավ հակառակորդ դաշինքին[44]: Ըստ Դավթի որդի Սմբատի՝ Գուրգենը Տայքի Կալմախ ամրոցից տեղափոխվել էր Շավշք եւ Արտահան: Նա թշնամացել էր Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհի հետ եւ 891 թ. ճակատամարտել նրա

40 Տե՛ս «Ցիշատակարանք ձեռագրաց», հ. Ա., էջ 99-100:

41 Տե՛ս **Իբն ալ-Ասիր**. «Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին», 11, «Արաբական աղբյուրներ», Բ., թարգմանություն բնագրից, առաջաբան եւ ծանոթություններ՝ Ա. Տեր-Ղեւոնդյանի, Երեւան, 1981, էջ 171-172:

42 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 447:

43 Տե՛ս «Քարթլիի մատյան», թարգմ.՝ Վ. Մարտիրոսյանի եւ Հ. Մկրտումյանի, մաս Ա. «Լրաբեր (հաս. գիտ.)», 1989, թ. 9, էջ 64:

44 Տե՛ս անդ, էջ 65:

դեմ Արտահանում, պարտվել ու սպանվել[45]: Ամենայն հավանականությամբ, սա այն Գուրգենն է, որի մասին հիշատակում է Հովհաննես Դրասխանակերտցին[46]: Եթե ճիշտ է մեր դիտարկումը, ապա նրա երկու ամրոցները 891 թ. անցել էին Ատրներսեհին, որոնք պահանջում էր Աբասը:

Նման նույնացման արդյունքը համապատասխանում է մեր այն եզրակացությանը, որ Սմբատ Ա.-ն գահ է բարձրացել 891 թ.: Ըստ որում, եթե նա գահ է բարձրացել, Ասողիկի տեղեկության համաձայն, հայոց 340 թ., ապա այդ իրադարձությունը թվագրվում է 891 թ. ապրիլից 18-ից (հայոց ՅԽ. թվականի նավասարդի 1-ը[47]) հետո: Ի միջի այլոց, Սմբատ Ա.-ի գահակալության թվականների հետ կապված դժվարությունները հաշվի առնելով՝ Ն. Ադոնցը, որ Աշոտ Ա.-ի մահը թվագրում է 890 թ.[48] եւ Սմբատ Ա.-ի թագավորության առաջին տարի համարում 891 թ., փորձել է խնդիրը լուծել նրա թագավորությունը թվագրելով հայկական թվականներով: Ըստ նրա՝ Սմբատ Ա.-ն վախճանվել է հայոց 361 թ. (912 թ. ապրիլ - 913 թ. ապրիլ)[49]՝ թագավորելով հայոց 340 թ. սկսած: Ստացվում է, որ Սմբատ Ա.-ի թագավորությունը հայկական թվականներով թվագրվում է 340-361 թթ. (891/892-912/913):

Փաստորեն, Սմբատ Ա.-ն գահ է բարձրացել 891 թ. ապրիլի 18-ից ոչ շատ ուշ: Աշոտ Ա.-ի մահվան եւ Սմբատ Ա.-ի գահ բարձրանալու միջակայքը կազմում է մի քանի ամիս:

Այժմ անցնենք նրա գահակալության շրջանի իրադարձությունների ժամանակագրությանը: Այդ շրջանում տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ ճշգրիտ եւ մանրամասն ժամանակագրական հերթականությամբ տեղեկություններ է հաղորդում Հովհաննես Դրասխանակերտցին՝ առանց թվականների նշման: Միակ թվագրումը վերաբերում է Ատրպատականի ամիրա Յուսուֆի արշավանքին: Այն է՝ հայոց 358 թ. (909/910)[50]: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ մինչեւ Դվինի երկրաշարժը տեղի են ունեցել մի քանի նշանակալից իրադարձություններ: Սկզբում Սմբատ Ա.-ն սերտացրել է կապերը Բյուզանդիայի հետ, որի պատճառով Ատրպատականի Ափշին ամիրան փորձել է ներխուժել Հայաստան: Սմբատը նրան ընդառաջ է ուղարկել 30 հազարանոց բանակ, եւ Ափշինը նահանջել է[51]: Այդ իրադարձությունը թերեւս տեղի է ունեցել 892 թ. եւ ոչ թե 893-ին, ինչպես ընդունված է կարծել[52]: Ափշինի հետ

45 Տե՛ս **Сумбат Давитис-дзе**, История и повествование о Багратионах, пер. М. Лордкипанидзе, Тб., 1979, էջ 34. նաեւ՝ «Քարթլիի մատյան», էջ 64-65:

46 Տե՛ս **M. Brosset**, *Histoire de la Georgie, Ier* partie, S.-Petersbourg, 1849, էջ 274:

47 Տե՛ս **Հ. Բարալյան**, Հայոց եւ հռոմեական տոմարները զուգակցելու մատչելի եղանակ. «Լրաբեր (հաս. գիտ.)», 1966, թ. 9, էջ 57-76:

48 Տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ե., էջ 190:

49 Տե՛ս անդ, էջ 193:

50 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 489-490:

51 Տե՛ս անդ, էջ 455-456:

52 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 28:

հարցերը կարգավորելուց հետո Սմբատը նույն թվականին հնազանդեցրել է Դվինի արաբներին[53]: Արտաքին եւ ներքին թշնամիների դեմ հաղթանակներից հետո Սմբատը նվաճել է Այսրկովկասյան երկրները[54] ամենայն հավանականությամբ 893 թ.: Այնուհետեւ 894 թ. տեղի ունեցավ Դվինի երկրաշարժը, որից անմիջապես հետո Ատրպատականի ամիրա Ափշինը հարձակվեց Հայոց թագավորության վրա, սակայն պարտություն կրեց Դողսի ճակատամարտում[55]: 894 թ. Սմբատ Ա.-ն թագադրեց Աղվանից Համամ իշխանին[56]: Վասպուրականի Աշոտ իշխանը (896-905) լքում է Սմբատ Ա.-ին եւ մեկնում Ափշինի մոտ[57]: Դրանից հետո, թերեւս Սմբատ Ա.-ի օգնությամբ[58], Վասպուրականին տիրում է Գագիկ Ապումրվանը, որը ձերբակալում է Աշոտին եւ նրա երկու եղբայրներին[59]: Տարոնի Դավիթ իշխանը մահացավ Դվինի երկրաշարժից երկու տարի անց՝ 896 թ.[60], որից հետո Ամիդի ամիրան, հաղթելով նրան փոխարինած Գուրգենին, տիրեց Տարոնի իշխանությանը[61]: Դատելով Հովհաննես Դրասխանակերտցու եւ Թովմա Արծրունու տեղեկություններից՝ վերոհիշյալ իրադարձությունները տեղի են ունեցել 896 թվականին: Սմբատ Ա.-ն Ամիդի ամիրայից պահանջեց հեռանալ Տարոնից, սակայն վերջինս չկատարեց պահանջը: Հավանաբար, արդեն 897 թ. Սմբատի հրամանով հավաքվեցին հայոց, վրաց ու աղվանից զորքերը, եւ Հայոց արքան արշավանքի դուրս եկավ[62]: Հայոց բանակը Գագիկ Ապումրվանի դավաճանության պատճառով ծանր պարտություն կրեց Թուղխ կոչվող գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում[63]: Օգտվելով Սմբատ Ա.-ի պարտությունից՝ Հայաստան է ներխուժում Ափշինը[64]: Ամենայն հավանականությամբ, այդ իրադարձությունը տեղի է ունենում 897 թ.[65], քանի որ նույն տարվա վերջին (ձմռանը) մահացավ Գեւորգ Կաթողիկոսը՝ գահակալելով 22 տարի (876-897/898)[66]: Հաջորդ Կաթողիկոսը՝ Մաշտոցը

53 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 456-457, նաեւ՝ **Հ. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 39-40:

54 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 457:

55 Տե՛ս անդ, էջ 462:

56 Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հայոց Սմբատ Ա. թագավորի կողմից Աղվանից եւ Կղարջքի իշխանների թագադրության հարցի շուրջ. «ԲԵՀ», «Հայագիտություն», 135.1., 2011, էջ 16-25:

57 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 463:

58 Տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 362-364. «Պատմութիւն Անանուն Զրուցագրի (կարծեցեալ Շապուհ Բագրատունի)», թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Երեւան, 1971, էջ 171:

59 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 464:

60 Տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 356-358:

61 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 465:

62 Տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 366-368:

63 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 466: Ըստ Մովսես Դասխուրանցու՝ Սմբատ Ա.-ի արշավանքն Ամիդի ամիրայության դեմ տեղի է ունեցել 893 թ. դեպքերից չորս տարի անց, այսինքն՝ 896/897 թ. (**Մովսես Կաղանկատվացի**, էջ 336):

64 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 467:

65 Ըստ Մովսես Դասխուրանցու՝ արշավանքը տեղի է ունեցել 897 թ., եւ նույն թվականին վախճանվել է Գեւորգ Կաթողիկոսը. **Մովսես Կաղանկատվացի**, էջ 337:

66 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 469:

(898) մահացավ յոթ ամիս գահակալելուց հետո[67]: Քանի որ Գեւորգ Կաթողիկոսը մահացել էր 897 թ. վերջին (կամ 898 թ. սկզբին՝ ձմռանը), իսկ Մաշտոցը Կաթողիկոս դարձավ 898 թ. գարնանը[68], ուստի Մաշտոցի գահակալությունը պետք է ավարտված լինի 898 թ. վերջին, որից հետո կաթողիկոսական գահին բարձրացավ Հովհաննես Դրասխանակերտցին (898-929): Ինչպես տեսանք, ըստ Ասողիկի՝ Հովհաննես Դրասխանակերտցին Կաթողիկոս դարձավ նույն՝ հայոց 346 թ. կամ 897/898 թ.[69]: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Գեւորգ Կաթողիկոսը վախճանվել է ձմռանը, իսկ Մաշտոց Կաթողիկոսը գահ է բարձրացել գարնանը եւ աթոռակալել 7 ամիս[70]: Փաստորեն, Հովհաննես Դրասխանակերտցին, իրոք, կարող էր գահ բարձրանալ 898 թ.: Հովհաննես Դրասխանակերտցու գահ բարձրանալու տարին կառուցվեց արքայանիստ Երազգավորսի եկեղեցին: Ամենայն հավանականությամբ, արդեն 899 թվականին է վերաբերում Հովհաննես Դրասխանակերտցու այն վկայությունը, որ Սմբատ Ա.-ն, գնահատելով Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհի հավատարմությունը, նրան թագադրում է[71]: Կարեւոր է այն, որ հաղորդելով Ատրներսեհի թագադրության մասին՝ պատմիչը տեղեկացնում է, թե դրան հաջորդել է Ափշինի արշավանքը, թերեւս 900 թվականին[72]:

Ափշինը որոշ ժամանակ ասպատակելով Հայաստանը եւ Վիրքը, ինչպես նաեւ փորձելով խաբեությամբ ձերբակալել Սմբատ Ա.-ին՝ հեռանում է Ատրպատական՝ Դվինում թողնելով իր որդուն եւ մեծ ներքինապետին: Տայքում ամրացած Սմբատ Ա.-ն վերադառնում է, հանդիպում մեծ ներքինապետին եւ հաշտվում նրա հետ, որից հետո Ափշինի որդուն նա շուրջ մեկ տարի ռոճիկ

67 Տե՛ս անդ, էջ 470:

68 Տե՛ս անդ, էջ 469-470:

69 Տե՛ս **Ասողիկ**, էջ 741:

70 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 469-470:

71 Անդ, էջ 471: Մ. Բրոսսեն, Ս. Երեմյանը, Ի. Ջավախիշվիլին եւ Կ. Թումանովը Ատրներսեհի՝ թագավոր դառնալը թվագրում են 888 թվականով. տե՛ս **M. Brosset**, նշվ. աշխ., էջ 273-279. **С. Еремян**, Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке. «Լրաբեր հաս. գիտ.», 1971, թ. 3, էջ 5, ծան. 7. **Ի. Ջավախիշվիլի**, Վրաց ժողովրդի պատմություն, II, Թբիլիսի, 1965, էջ 111 (վրացերեն). **C. Toumanoff**, The Bagratids of Iberia from the eight to the eleventh Century. "Le Museon", LXXIV, Louvain, 1961, էջ 21-25: Մ. Չամչյանցը, Հ. Մարկվարտը, Ն. Ադոնցը, Է. Թադայշվիլին, Ե. Ցագարեիշվիլին եւ Մ. Ճանաշյանը կարծում են, որ Ատրներսեհի թագադրությունը տեղի է ունեցել 899 թվականին. տե՛ս **Մ. Չամչեանց**, նշվ. աշխ., 1985, էջ 727. «Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը», ծանօթութիւններով, գրեց պրոֆ. դկտ. Յ. Մարկուարտ, գերմաներէնէ թարգմանեց Հ. Մ. Հապոզեան, Վիեննա, 1913, էջ 148 (ներդիր). **Ն. Ադոնց**, Երկեր, հ. Ա., էջ 501. "Жизнь и известие о Багратидах, царях наших грузинских, откуда они явились в эту страну, или с какого времени владеют они царством Грузинским, которое написал Сумнат, сын Давида", пер. Е. Такайшвили. «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. 28, Тифлис, 1900, էջ 83. «Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկությունները Վրաստանի մասին», հայերեն տեքստը վրացերեն թարգմանությամբ, ուսումնասիրությամբ եւ ծանոթագրություններով հրատ. Ե. Ցագարեիշվիլին, Թբիլիսի, 1965, էջ 0121-0122 (վրացերեն). **Մ. Ճանաշեան**, Դաւիթ կիւրապաղատ (պատմական ուսումնասիրութիւն), Վենետիկ, 1972, էջ 13-14: Ատրներսեհի թագադրությունը մոտավորապես տեղադրվել է նաեւ 906-908 թթ. միջեւ. տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, 1976, էջ 31-32:

72 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 472:

էր վճարում[73]: Ռոճիկ վճարելու մեկ տարին, ամենայն հավանականությամբ, պետք է հաշվել 900 թ. կեսերից: Այնուհետեւ, հավանաբար 901 թ. մեծ ներքինապետը հեռանում է Հայաստանից՝ Սմբատ Ա.-ին հանձնելով նրա որդի Աշոտին եւ մյուս որդի Մուշեղի կնոջը, որոնք պատանդ էին պահվում իր մոտ: Այդ պատճառով 901 թ. Ափշինը կրկին որոշում է արշավել Հայաստան, սակայն ճանապարհին մահանում է[74]:

Լսելով Ափշինի մահվան լուրը՝ Սմբատ Ա.-ն գրում է խալիֆային՝ խնդրելով թեթեւացնել արքունի հարկը եւ «ի բաց զինքն հատանել յազգէ (իմա՛ Ատրպատականի արաբների - Ա. Ե.) յայնմանէ»[75]: Խալիֆան համաձայնեց: Այդ մասին իմանալով՝ Յուսուֆն արշավեց Հայաստան, թերեւս 902 թ.: Սրա հետ էր հավանաբար կապված կայսիկների ապստամբությունը, ըստ Թովմա Արծրունու՝ 902 թ., որն արագորեն ճնշվեց: Սմբատը դիմադրություն կազմակերպեց Յուսուֆի դեմ, որը վերջինս հաղթահարել չկարողացավ եւ բանակցելու համար պատվիրակություն ուղարկեց: Կողմերն ընդհանուր հայտարարի եկան, որից հետո Սմբատը մեկնեց ձմեռելու Նախճրաձոր գյուղում, իսկ ոստիկանը՝ Դվինում: 903 թ. գարնանը Յուսուֆն առատ նվերներ ուղարկեց Սմբատին եւ հաշտվեց նրա հետ[76]: 903 թ. Սմբատ Ա.-ի դեմ ելույթ ունեցավ Սյունյաց Սմբատ իշխանը, որն ամրացավ Վայոց ձորի ամրոցներում, սակայն Վասպուրականի Աշոտ իշխանի միջնորդությամբ Սմբատը հնազանդվեց[77]: Թերեւս Սյունյաց իշխանին հայոց թագավորի դեմ էր տրամադրել Յուսուֆը, բայց քանի որ նա հաշտվել էր Սմբատ Ա.-ի հետ, Սմբատ Սյունեցուն, բացի հնազանդվելուց, այլ բան չէր մնում:

Այնուհետեւ Հովհաննես Դրասխանակերտցին ներկայացնում է երկրի խաղաղ բարգավաճումը՝ մինչեւ այն ժամանակները, երբ Վիրք ու Գուգարք ներխուժեց աբխազաց Կոստանդին Գ. թագավորի (893-923) զորքը: Սմբատի զորքն արագ արշավանքի դուրս եկավ եւ ջախջախեց հակառակորդին՝ գերելով Կոստանդինին[78]: Աբխազական արշավանքը տեղի է ունեցել 906 թ.[79]:

Աբխազաց թագավորությունում, Կոստանդին Գ.-ի ձերբակալվելուց հետո, սկսում են մտածել նոր թագավորի մասին, ուստի Սմբատ Ա.-ն թագավորական ոսկե խույր է դնում Կոստանդին Գ.-ի գլխին, արքայական հագուստներ հագցնում եւ օգնական զորքով ուղարկում Աբխազիա: Այնուհետեւ «ի բազում

73 Տե՛ս անդ, էջ 473:

74 Տե՛ս անդ, էջ 474-475: Ափշինի մահը Թովմա Արծրունին դնում է 898 թ. (**Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 376): Ըստ պատմիչի՝ Ափշինի մահից հետո միայն վախճանվեց Գեւորգ Կաթողիկոսը: Արծրունյաց պատմիչի հաղորդումը պարունակում է ժամանակագրական սխալներ:

75 **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 477:

76 Տե՛ս անդ, էջ 478-480:

77 Տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 382-384:

78 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 481-483:

79 Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Հայ Բագրատունիների տերությունը (885-908 թթ.), Երեւան, 2011, էջ 58-61, նույնի՝ «Հայոց Սմբատ Ա. թագավորի աբխազական արշավանքը». «Լրաբեր (հաս. գիտ.,)», 2010, թ. 1-2, էջ 120-130:

հնազանդութիւն եւ մտերմական ծառայութիւն համախոհութեան զինքն (իմա՛ Կոստանդին Գ. - Ա. Ե.) արքային Սմբատայ բերէր սակս հայրաբուն նախախնամութեան նորա առ նա»[80]:

Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Ատրներսեհը չարացավ՝ կարծելով, որ դա ի հակադրություն իրեն է արվել, եւ սկսեց դավադրություն ծրագրել: Բայց Սմբատ Ա.-ն սկզբում լուրջ չէր վերաբերվում Ատրներսեհի դժգոհությանը, մինչեւ պարզվեց, որ հայ ազդեցիկ իշխաններից մեկը՝ Հասանը, որը ծրագրում էր սպանել նրան, դավադրության մեջ է ներքաշել Ատրներսեհին: Վերջինիս խոստացվել էր հայոց գահը[81]: Նրանց է միանում նաեւ Հավնունի իշխանը: Դավադիրների զորքը գալիս է Անի, որը հանձնվում է Ատրներսեհին, իսկ այնտեղից՝ մայրաքաղաք Երազգավորս եւ տեղավորվում արքունական ապարանքում: Սմբատ Ա.-ն, որ գտնվում էր Տաշիրքում, իմանում է այդ մասին եւ արշավում նրանց դեմ: Ատրներսեհն ու Հասանը, թալանելով Անիի ամրոցը, հեռանում ու ապաստանում են Տայքում: Դավադրության լուրը միավորում է բոլոր իշխաններին, որոնք զորքով հավաքվում են Սմբատ Ա.-ի շուրջը: Հայոց բանակը ներխուժում է Ատրներսեհի տիրույթներ, սակայն թագավորը հրամայում է անմեղներին չվնասել: Ատրներսեհը գալիս է Սմբատ Ա.-ի մոտ եւ ներում հայցում: Սմբատ Ա.-ն ներում է, սակայն նրա ավագ որդուն պատանդ վերցնում՝ որպես հավատարմության գրավական: Սմբատ Ա.-ն Ատրներսեհի կողմնակից իշխաններին, որոնք, դատելով պատմիչի տեղեկություններից, Ատրներսեհի տիրույթներից էին («զնախարարսն զիւր առհասարակ ի նմանէ ի ձեռն առեալ»), կուրացնել է տալիս եւ մի մասին ուղարկում Բյուզանդիայի կայսերը, իսկ մյուս մասին՝ աբխազաց թագավորին[82]:

Ամենայն հավանականությամբ, դավադիրներն Ատրպատականի Յուսուֆ ամիրայի հետ գործակցել էին, քանի որ Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ դավադրությունը ծագել էր այն բանից հետո, երբ լարվել էին Սմբատ Ա.-ի ու Յուսուֆի հարաբերությունները, որը Հասանին եւ յուրայիններին վախ էր ներշնչել ապագայի վերաբերյալ[83]:

907 թ. Գագիկ Արծրունին գրավեց Ամյուկ բերդը: Սմբատ Ա.-ն արշավեց դեպի Ամյուկ, գրավեց այն, իսկ հետո վաճառեց Գագիկին[84]: Այս իրադարձությունը, ինչպես նաեւ այն, որ նույն ժամանակ Սմբատ Ա.-ն մերժեց Գագիկի խնդրանքը՝ Նախճավանը նրան հանձնելու[85], հանգեցրեց նրան, որ Վասպուրականի իշխանն սկսեց փնտրել Ատրպատականի ամիրայի հովանավորությունը: Վերջինս ընդառաջ գնաց եւ 908 թ. թագադրեց նրան:

80 **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 483:
81 Տե՛ս անդ, էջ 485-487:
82 Տե՛ս անդ:
83 Տե՛ս անդ:
84 Տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 434-438:
85 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 487:

Ըստ Ստեփաննոս Օրբելյանի՝ 908 թ. Վասպուրականի թագավորության ստեղծումից հետո տեղի է ունեցել Աղվանից եւ Կղարջքի իշխանների թագադրությունը[86]: Այդ թվագրումը լիովին համապատասխանում է վերոհիշյալ դեպքերի ժամանակագրությանը: Փաստորեն, 908 թ. Յուսուֆը լուրջ քայլեր է կատարում Հայոց թագավորությունը մասնատելու եւ թուլացնելու ուղղությամբ: Այդ նպատակով նա թագադրում է Գագիկ Արծրունուն[87]: Սյունյաց իշխանը Յուսուֆի առաջարկած թագից հրաժարվում է[88]: Հույժ կարեւոր տեղեկություն է պահպանել Ասողիկը, որը, խոսելով 908 թ. իրադարձությունների մասին, տեղեկացնում է, որ Յուսուֆ ամիրայի մոտ «երթեալ Ատրներսեհ Վրաց թագաւոր եւ Գագիկ իշխան Վասպուրականի» ու այլ հայ իշխաններ[89]: Փաստորեն, ի տարբերություն Հովհաննես Դրասխանակերտցու, համաձայն որի՝ Ափշինի մոտ գնացել է Գագիկ Արծրունին եւ թագ ստացել[90], Ասողիկը հաղորդում է, որ Յուսուֆի մոտ է գնացել նաեւ Ատրներսեհ Բագրատունին: Հայոց 358 թ. (909/910) Յուսուֆի արշավանքի հետեւանքով Հայոց թագավորը ստիպված ապաստանեց աբխազաց թագավորությունում[91]: Յուսուֆի կողմից Ատրներսեհի թագադրությունը հիմնավորվում է թեկուզ այն փաստով, որ վերջինս թագ էր առաջարկել նաեւ Սյունյաց Վասակ իշխանին: Այսինքն՝ հայոց թագավորությունը մասնատելու առումով Յուսուֆի համար ոչ մի խնդիր չկար Գագիկ Արծրունուց եւ Վասակ Սյունուց բացի, թագ առաջարկել նաեւ Ատրներսեհին:

Թագեր բաժանելու միջոցով Հայոց թագավորությունը մասնատելուց հետո Յուսուֆը որոշեց մեծ արշավանք ձեռնարկել Հայաստան: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Յուսուֆը Հայաստան է արշավել հայոց 358 թվականին, այսինքն՝ 909 թ. ապրիլից մինչեւ 910 թ. ապրիլն ընկած ժամանակահատվածում[92]: Ըստ որում՝ արշավանքը սկսվել է 909 թ. գարնանը[93], քանի որ պատմիչը հստակ ընդգծում է, որ դրա նախորդ տարին՝ 908 թ., Վասպուրականի Գագիկ Արծրունի իշխանը Յուսուֆի կողմից թագադրվել էր որպես հայոց թագավոր[94]: 909 թ. ամռանը Յուսուֆի զորքերը հետապնդում են Սմբատ Ա.-ին, որը հեռացել էր Կղարջք, իսկ աշնանը հաստատվել Դվինում՝ ձմեռն այնտեղ անցկացնելու նպատակով[95]: Միեւնույն ժամանակ Սմբատ Ա.-ն վերադառնում է Երազգավորս[96]: Սմբատ Ա.-ի նահանջի ժամանակ Հովհաննես

86 Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 299:
87 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 487-488:
88 Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, էջ 299:
89 Տե՛ս **Ասողիկ**, էջ 744:
90 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 487-488:
91 Տե՛ս **Ասողիկ**, էջ 744. «Քարթլիի Մատյան», էջ 66:
92 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 489-490:
93 Տե՛ս անդ, էջ 489:
94 Տե՛ս անդ, էջ 487:
95 Տե՛ս անդ, էջ 490-491:
96 Տե՛ս անդ, էջ 492:

Դրասխանակերտցին հեռացել էր Աղվանից թագավորություն: Հաջորդ՝ 910 թ. գարնանը Յուսուֆը զորք է ուղարկում Սմբատ Ա.-ի դեմ, որոնց միանում են Գագիկ Արծրունու գնդերը: Սմբատ Ա.-ի զորքը ղեկավարում էին որդիները՝ Աշոտն ու Մուշեղը: Ճակատամարտը տեղի է ունենում Նիգ գավառի Ձկնավաճառ կոչվող վայրում եւ ավարտվում Սմբատ Ա.-ի զորքի պարտությամբ: Աշոտը փրկվում է, իսկ Մուշեղը՝ գերի ընկնում[97]: Այնուհետեւ սկսվում են Յուսուֆի զորքերի ասպատակությունները: Սմբատն ամրանում է Կապույտ բերդում[98], իսկ երկրում ազատագրական պայքար է սկսվում: Դրանից դրդված՝ Յուսուֆը Գագիկ Արծրունուն ուղարկում է Վաղարշակերտ ամրոցը գրավելու: Գագիկը, մեծ կորուստներ տալով, անհաջողության է մատնվում[99]: Ասողիկի տեղեկություններով՝ Գագիկի հարձակումը Վաղարշակերտի վրա տեղի է ունեցել 363 թ. (914/915), իսկ Սմբատ Ա.-ի մահը՝ 364 թ. (915/916)[100]: Ակնհայտ է, որ պատմիչի նշած թվականներն իրականությանը չեն համապատասխանում, սակայն կարեւոր է, որ պատմիչն այդ երկու իրադարձությունը դնում է իրար հաջորդող թվականների միջեւ, այսինքն՝ Վաղարշակերտի դեպքերից մինչեւ Սմբատ Ա.-ի մահը կազմում է մեկ տարուց ոչ ավելի:

Հստակեցնելով, որ Վաղարշակերտի պաշարումը տեղի է ունեցել ամենայն հավանականությամբ 912 թ.՝ կարող ենք նկատել, որ Ձկնավաճառի ճակատամարտից հետո սկիզբ առած ազատագրական պայքարը, որը խիստ անհանգստացրել էր Յուսուֆին[101], ճնշելու նպատակով վերջինս փորձել է օգտագործել իր իսկ կողմից Հայոց թագավոր հռչակված Գագիկին:

Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ Բյուզանդիայի կայսր Բարսեղը, իսկ իրականում՝ Լեւոն Զ.-ն (886-912)[102] ցանկացավ օգնության գալ Սմբատին, բայց վախճանվեց, իսկ նրան փոխարինած Ալեքսանդրը (912-913), որը զբաղված էր ծագած խռովությունները ճնշելով, Սմբատին օգնելու մասին մտածել չէր կարող[103]: Նույն ժամանակ Կապույտ բերդում ամրացած Սմբատին Յուսուֆը 912 թ. խաբեությամբ գերեց եւ շուրջ մեկ տարի կտտանքների ենթարկեց[104]: Այդ ընթացքում Սմբատին իր հետ վերցնելով՝ Յուսուֆը փորձ կատարեց գրավելու Երնջակ ամրոցը, բայց անհաջողության մատնվեց եւ 913 թ. հրամայեց հայոց արքային տանջամահ անել[105]: Քանի որ Հովհաննես Դրասխանակերտ-

97 Տե՛ս անդ, էջ 492-493. **Ասողիկ**, էջ 745:

98 Տե՛ս **Ասողիկ**, էջ 745:

99 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 493-500:

100 Տե՛ս **Ասողիկ**, էջ 745:

101 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 492-493:

102 Հ. Բարթիկյանը կարծում է, որ Հովհաննես Դրասխանակերտցին «բասիլեւս»՝ «թագավոր» բառը սխալմամբ Բարսեղ ձեւով է ներկայացրել. տե՛ս **Հ. Բարթիկյան**, Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ եւ 139-րդ թղթերը՝ ուղղված Հովհաննես Դրասխանակերտցուն եւ Սմբատ Ա. թագավորին. «ՊԲՀ», 1966, թ. 4, էջ 251, ծանոթ. 3:

103 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 502: Ն. Ադոնցը կարծում է, որ իրականում Սմբատը Բյուզանդիայից օգնություն չի խնդրել. տե՛ս **Ն. Ադոնց**, Երկեր. հ. Ե., էջ 192:

104 Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 502-504:

105 Տե՛ս անդ, էջ 504-506:

ցին հստակորեն նշում է, որ Սմբատ Ա.-ին օգնել չկարողացան եւ՛ Լեւոն Զ. եւ՛ Ալեքսանդր կայսրերը[106], եւ դրանից հետո Սմբատ Ա.-ն գերվեց ու շուրջ մեկ տարի կտտանքների ենթարկվելով՝ սպանվեց, կարող ենք նշել, որ Սմբատը գերվել է 912 թ.: Ավելին, Բյուզանդիայից օգնություն խնդրելուց հետո կայսրը ոչ ուղղակի, այլ Կոստանդնուպոլսի Նիկողայոս Միստիկոս պատրիարքի միջոցով պատասխանել է Սմբատ Ա.-ին: Սակայն պատասխանը, որն ուղարկվել է, ըստ Հ. Բարթիկյանի ճշգրտման՝ 913 թ.[107], խիստ ուշացած է եղել, քանի որ Սմբատ Ա.-ն հայտնվել էր գերության մեջ:

Այժմ մնում է միայն քննարկել գլխավոր հարցը՝ Սմբատ Ա.-ի թագավորության տարիների քանակի խնդիրը: Ճշգրտելով, որ նա գահ է բարձրացել 891 թ. եւ սպանվել 913 թ., կարող ենք հիմնավոր համարել Հովհաննես Դրասխանակերտցու այն տեղեկությունը, որ Սմբատ Ա.-ն թագավորել է 22 տարի: Սակայն 891-913 թթ. միջակայքը կազմում է ավելի քան 22 տարի: Հայտնի է, որ իր կյանքի վերջին գրեթե մեկ տարին Սմբատ Ա.-ն անցկացրել է գերության մեջ: Հնարավոր է, որ Հովհաննես Դրասխանակերտցին գերության շրջանը հայոց թագավորի գահակալության տարիների մեջ պարզապես չի հաշվարկել:

Ամփոփելով քննությունը՝ կարող ենք նշել, որ Սմբատ Ա.-ն գահ է բարձրացել 891 թ. ապրիլից հետո՝ Աշոտ Ա.-ի մահից կարճ ժամանակ անց՝ թագավորելով 22 տարի՝ մինչեւ 913 թ.: Սմբատի օրոք տեղի են ունեցել մի շարք իրադարձություններ, որոնց թվագրումը նախկինում կատարվել է նրա թագավորության՝ ավանդական 890-914 թթ. թվագրման շրջանակներում: Նա 892 թ. բարելավել է հարաբերությունները Բյուզանդիայի հետ՝ կնքելով առեւտրային պայմանագիր, եւ պարտության մատնել Դվինի արաբներին, իսկ 893 թ.՝ նվաճել Այսրկովկասի երկրները: Դվինի երկրաշարժը տեղի է ունեցել 894 թ., եւ նույն թվականին էլ՝ Դողսի ճակատամարտը: Թուղխի ճակատամարտը տեղի է ունեցել 897 թ.: Ատրպատականի Ափշին ամիրան մահացել է 901 թ., իսկ նրան հաջորդած Յուսուֆը Հայաստան է արշավել 902 թ.: Յուսուֆն ու Սմբատ Ա.-ն հաշտվել են 903 թ., եւ Հայաստանում 3 տարի խաղաղություն է հաստատվել: 906 թ. Սմբատ Ա.-ի զորքը ջախջախել է աբխազաց թագավորի բանակը, որից երկու տարի անց երկրում պառակտում է սկսվել: 908 թ. Ափշինը թագադրել է Վասպուրականի Գագիկ Արծրունի իշխանին, իսկ 909 թ.՝ ներխուժել հայոց թագավորություն: 910 թ. Նիգ գավառում տեղի ունեցած ճակատամարտում Սմբատի բանակը պարտություն է կրել, իսկ 912 թ. Սմբատը գերվել է: Նա սպանվել է 913 թ.՝ շուրջ մեկ տարի գերության մեջ անցկացնելուց հետո:

---

106 Տե՛ս **Թեոփանեսի Շարունակող**. Օտար Աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, 15, Բյուզանդական աղբյուրներ, Ե., թարգմանություն բնագրից, առաջաբան եւ ծանոթագրություններ՝ Հ. Բարթիկյանի, Երեւան, 1990, էջ 223-224:

107 Տե՛ս **Հ. Բարթիկյան**, նշվ. աշխ., էջ 251-256: